ԹԼԹԱԿ ՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 Ֆր.
ԱՅՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովո՛ւրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻՉՄԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 6. ՀՈԿՏԵՄԲԵՐ. Nr 6. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.

Եւրոպական տէրութիւնների արտաքին գործերի մինիստրներից և քաղաքական անձերից իւրաքանչիւրը միշտ ձառում է հաստատամիտ, կտրուկ և ֆառտառոսի աղբիւրի նման վճիտ ու պարզ կերպով: Նրանք միշտ հիմնում են իրանց խօսքերը երկու հակադիր դրութիւնների վրայ, ինչպէս վայել է ամեն քաղաքագէտի, որ պէտք է իր իւրաքանչիւր միտքն այնպէս արտայայտէ, որ հէնց նոյն այդ մտքի հերքումն իր մէջ իսկ գտնվէ: Դա է եղել դիպլոմատութիւն, դիւանագիտութիւն կոչված հրաշքը, որ հայերիս մէջ միայն մի քանի „նշանաւոր դիւանագէտներ“ իրանց մենաշնորհ են արել:

Եւ եւրոպական քաղաքական անձերը այսպէս են ձառում. —

„Պարոններ, այսօր կան շատ քաղաքական խնդիրներ: Դրանցից ամենատագնապալին հայկական խնդիրն է: Բա՜յց, պարոններ, բա՜յց պէտք է հասկանալ, որ այդ խնդիրը մեզ համար գոյութիւն կունենայ միայն այն ժամանակ, երբ մեր շահին նպաստաւոր լինի: Մենք պահակ ու պաշտպան ենք մարդկութեան իրաւունքների: Բայց հզօրագոյնի իրաւունքն է, որ պէտք է պաշտպանենք: Մենք համակված ենք մարդասիրական գաղափարով: Բայց մենք հնազանդվում ենք իրականութեան, որ մարդակերական է: Մենք գիտենք ցաւել, երբ մէկի իրաւունքները ոտնակոխ են լինում. մենք գիտենք խղճալ, երբ մարդկանց կոտորում են. մենք պաշտպան ենք տկարի: Այո՛, դա հակառակ է մեր ըզգացման, մեր բարձր գաղափարին, բայց ո՛չ մեր մեծ գործին, որովհետև նոյնն անում ենք նաև մենք յանուն մեր հայրենիքի մեծագոյն շահերի. գառը զոհաբերելը մեր Մոլոխ և Ոսկէ Հորթ աստուածներին — դա ամեն տէրութեան հաւատքի սուրբ արարողութիւնն է: Տկար է գառը, բայց գայլին չէ կարելի փոխել տալ իր բնութիւնը: Մենք պահանջում ենք, որ Եւրոպայում գտնված մի տէրութիւն՝ լինի եւրոպական. մենք տեսնում ենք, որ այդպէս չէ Թիւրքիան: Բայց այդ էլ միայն խօսքով է, որ մենք կարող ենք պահանջել՝ ցոյց տալու համար, թէ մենք նրանցից լաւ ենք. սնոտի՜ խաբէութիւն: Մենք ամենախիստ կերպով պահանջներ ենք անում և բաւարարութիւն ուզում, երբ մեր մի հպատակի քիթն իսկ արիւնոտվում է Թիւրքիայում: Բայց իբրև իրաւաճանաչ, ընդունում ենք, որ սուլթանն էլ իրաւունք ունի իր հպատակների վրայ, նրանց կեանքը, նրանց ինչքը դրված են սուլթանի անմիջական իրաւասութեան տակ. և, հետևաբար, նոյն իսկ եւրոպական օրէնքով, նա կարող է վարվել նրանց հետ իր կամքի համաձայն: Մեր շահերի համար մենք չենք խնայում ո՛չ մի խիստ դիպլոմատական միջոց ընդդէմ Թիւրքիայի, այլ և սպառնում ենք պատերազմով, երբ դրա հարկն ենք տեսնում, և անուանում ենք Թիւրք կառավարութիւնը՝ բարբարոսական և սուլթանին՝ մարդասպան: Բայց մեր շահերից չէք բարձր շահ, թէկուզ մանր ազգեր զոհ դնան դրան և թէև սուլթանն է նրանց դահիճն ու մարդասպանը, բայց գիլիոտինն ու կախաղանը թագակիրների համար չեն, որքան էլ նրանք մեծ ոճրագործներ լինեն, այլ միայն հասարակ մահկանացուների և մասնաւորապէս իրանց հայրենիքն ու ժողովուրդը պաշտպանող յեղափոխականների համար են, որ եւրոպական տէրութիւնների հանդիստն են խռովում և նրանց փոխադարձ բարեկամական յարաբերութիւնները լարում:

„Ահա յանուն այսօրինակ մեծ սկզբունքների և քաղաքական հիմնական շահերի, յանուն մեծ ազգերիս խաղաղութեան և մարդկութեան ամենամեծ բարիքների — մենք չենք ճանաչում հայկական խնդիր, թէև շատ ցաւ ենք զգում հայկական կոտորածների լուրերից....“

Եւ ամեն անգամ գիշերը, երբ սուլթանին հանում է այդպիսի մի ճառի լուր, նա քթախոտը տանելով իր քիթը, երկու անգամ իրար ետևից փռնգտում է: Ժողովրդական առած կայ — „գիշերւայ սաբրը խեր է“:

ԱՆՎՆԱՍ ՄԱՐԴ.

ՆՈՐԱԳՈՅՆ ՀԵՐՈՍ.

(Հետևողութիւն.)

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Օր մը եկան ոստիկաններ,
Ձիս բռնեցին անպիտաններ,
Տարին քանտը նետեցին:
Երբ որ ինձի քննեցին,
Ըսի՝ քան մը չեմ գիտեր,
Այն Պետրոսէն հարցուր, տէր:
Խեղճ Պետրոսիկ. բռնեցին,
Ցըմահ աքսոր ղրկեցին:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Բանտէն ինձի չէին թողուր,
Միշտ կուլայի ես ալ բուռ-բուռ.
Օր մ՝ ալ պետը գիս կանչեց
Քննեց, նայեց, յօրանջեց,
„Քոյր մը ունիս գեղեցիկ,“
Ըսաւ... Փաստն էր ազդեցիկ.
Քոյրս ծախեցի ես անոր,
Բանտէն ելայ նոյն ան օր:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Ազգասէր չե՞մ ես անուանի,
Թիւրք պետին սէրն է պիտանի,
Շուտ-շուտ անոր կերթայի,
Ճաշ կընէի, խնդայի.
Շատ բան ինձմէ կիմանար,
Շընորհապարտ ինձ կըլլար:
Թէ՛ անպակաս էր փարաս,
Թէ՛ ազգասէր մորթ վըրաս:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Ազգիս բաղդն էր շատ պղտորած,
Պէտք է հանիլ մեծին փառաց.
Ժողվել տրւի փարաներ
Մեծաքանակ. աղաներ
Սպանել տրւի. փարայի
Համար ինչե՞ր ալ չըրի:
Ազգասէրի քօղին տակ
Չէի ըներ ալ կատակ:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Փարա՞ եւ փառք... Ի՞նչ երկարիմ...
Պետն ինձ ըսաւ՝ „քաջ՞, աֆէրիմ“...
Դիմակս էր հաստ. բայց մէկ օր
„Վատ“, պօռաց ինձ կամակոր
Ձայնով մարդ մը եւ դաշոյն
Ջարկեց կրծքիս, ահ, այն շուն:
Ես չի մեռայ, բայց ափսո՞ս,
Շատեր ինկան բանտին փոս...

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Ազգին արիւն գետով թափէր,
Ցաւէն աշխարհ կը սարսափէր...
Դաշինք կապած պետին հետ
Ես՝ զառնազգեստ, խորագէտ
Ներկայացայ մեծերուն,
Ազգիս պաշտպան հայերուն,
Անոնց շինած շէնքն ու գործ
Քանդելու մեծ ընել փորձ:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի

Zugmunnuup Zuinpuulunlyp
Le Triomphe de l'Arménie
A mon cher Ledig
Paul Gaussier



Այդ ինչ!! դարձեալ նօտա!! Լաւ, լաւ, միւսներուն հետ չամբուղը նետէ։



Առաջարկ արձանի մը պոլսոյ մէջ կառուցանելի.

„ԱՊՏԱԿ“-Ի ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

ՌԵՊՈՒՍ ԹԻՒ 7



ԹԻՒ 6 ՌԵՊՈՒՍԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

Նաւըլ-մի-հետ-գոր-ծակ-ցի-լ-մա-տըն-ութ իւն-չէ-հապա-ին-չէ.-- Հնչակ-իա-նու-նշան-ա-գոր-ծել-նէ-նգ-ութ-իւն-ստոր-ն-ութ իւն-չէ հա-պա-ին-չէ։

Նաւըլմի հետ գործակցիլ մատնութիւն չէ հապա ի՞նչ է. Հնչակի անունը շահագործել նենգութիւն ստորնութիւն չէ հապա ի՞նչ է։

Շատ էնթրիկներ ես լարեցի
Աղէկը զէշ հռչակեցի,
Դաւեր ըսի մուլթին մէջ,
Սուտեր ըսի ալ անվերջ,
Սրիկայք մէկ տեղ ժողվեցի,
Դաշոյն սրրել ստիպեցի,
Պաշտպաններու հայ ազգին
Ճիգ թափեցի տեսնալ դին:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Ահա՛ ունիմ ես մեծ փէշակ.
Ո՞վ կըսէ թէ ես չե՞մ մըշակ
Ազգիս համար հոգացող.
Ո՞վ կըսէ ինձ ուրացող,
Դիմակաւոր ազգադաւ
Կուզեմ մեծի ես համբաւ,
Ընբանեակներ խնկարկեն
Եւ գործս յառաջ նաւարկեն:

Հետեւելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կեանքիս մէջ ազգիս վընաս չի արի:

Խենթը.

ԿԵՂԾ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ.

Սև մտածումների մէկ օր էր, երբ դիւանագէտի սլացող փառքի ետևից զուր արշաւանք անելուց յետոյ յոգնած՝ Մինաս Չարազ անուան համապատասխանող անձը յանկարծ ջղային ծիծաղով բռնուեցաւ: Այդ րոպէին նա ձեռքերը շփեց ուրախ կերպով և իր ընթերցող չունեցող անմահ թերթի մէջ անմահացրեց հետևեալ մահացուցակը. —

„Հնչակը“ իմացնում է, որ երկպառակութիւններ կան և իր խմբագրից զատված են երևելի Հնչակեաններ Ա., Բ., Գ., Դ...“ Այդ գրելով մեծամիտ դիւանագէտը հաճոյքից ըսկսաւ լպստել իր պեխերից մեղը: Նա գիտէր, որ „Հնչակում“ այդպէս չէ գրված, այլ թէ՝ „Ա.,Բ.,Գ.,Դ. և այլն արտաքսված են Հնչակեան Կուսակցութիւնից“. բայց այդ դիւանագէտը միշտ երկիւղ ունի ճշմարտութիւնից: Պէտք է սակայն նկատել, որ հանճարեղ ներշնչումներ էլ ունի երբեմն: Այսպէս, այն „երևելի Հնչակեանների“ համար ասում է, թէ նրանք կազմեցին մի „bande“, ածական, որ եթէ պարզ հայերէն թարգմանէր՝ „աւազակային խումբ“ կամ նոյնիմաստ մի բառ պէտք է գործածէր: Բայց պէտք է ենթադրել, որ Բոսֆորի այդ զաւակն ուրախութիւնից շըփոթվել էր, որովհետև Բոսֆորի հոսոսական դպրոցի պտուղների արժանաւոր արարքների հոտն էր ըսել, որ նրա վրան հաշիշի ազդեցութիւն էր գործել, և վաղուց դրան կարօտ եղած՝ հիացման ու հրճուանքի մէջ էր: Եւ նա երգելով, մռմռաց իր յափշտակված քթի տակ. —

„Ահ, Անուշ հոտ ընտանի“,
„Որ զիս Բոսֆոր կը տանի...“

Նա յիրաւի նախանձում էր այդ „երևելի Հնչակեանների“ արարքներին, որոնց ինչ պտուղ ու ծաղիկ լինելը „Հնչակ„ էլ հոտոտած լինելով, մեծ սիրով այն զիջանում է կեղծ պրոֆէսոր Չերազին: Սակայն այստեղ կայ մի կէտ. այդ Չերազը երէկ ամեն տեղ սաստիկ յարձակվում էր այն Հնչակեանների դէմ, իսկ այսօր նրանք յանկարծ „երևելի“ են դարձել նրա համար... Այդ փոփոխամտութեան թիլիսմն արդէն Չերազի սեփականութիւնն է. և մենք ոչինչ չենք աւելացնում, այլ միայն արձանագրում ենք Չերազի ամեն մի խօսքն ու շարժուածքը, որ այդպիսի թանկագին բաները հայոց վերածնութեան պատմութեան համար չը կորչեն:

*
* *

Այդ հանճարեղ մարդը մի սովորութիւն ունի, որ ձեռնածուութեան գրքերում կը գրաւէ իր պատուաւոր էջը: Նա մի րոպէ իսկ չէ մոռանում, որ պէտք է ամեն կուսակցութեան առջև խունկ ծխել, շողոքորթել նրան, յուսալով որ այսպիսով դրանց կողմից երբէք չի դատափետվիլ, դատափետութիւն, որին նա արժանի է: Ի ներքուստ նա ամեն կուսակցութիւնների ձախորդութեան համար աղօթող է, որովհետև ամեն կուսակցութիւններ վնասակար են... մանաւանդ նրա փառքի ու շահի համար, և ինքը ձգտում է մենակ լինել ասպարէզում, ինչպէս չարագուշակ բուն անտառում: Բայց եկ և տես, որ „Հնչակն„ ունի մի խոշոր պակասութիւն, որը Չերազի մէջ չը կայ (ինչպէս և այսպիսի շատ պակասութիւններ չը կան նրանում). այդ պակասութիւնն այն է, որ „Հնչակն„ անսովոր է կեղծաւորելու և „Ապտակն“ էլ (մենք մեզ չենք կարող անտես թողնել), և „Ապտակն“ էլ սովոր է ապտակելու... եւ այդ երկու յանդուգնը մտրակները մերթ ընդ մերթ հաճոյք են զգացել Չերազին հալածելու: Մեղք, իսկապէս, որովհետև Չերազն այդպիսի մարմնամարզութիւնից յետոյ միշտ լալիս է: Հետևաբար, նա ջըրում խեղդվողի նման, այս կան այն կուսակցութեան ամենամի մեծ ու չնչին պատրուակին ամուր փաթաթվում օձապտոյտ կերպով և համարձակութիւն է առնում, անկիւնաւոր կերպով սողոսկելով, խայթելու փորձ անել, մի բան ինչ արդէն սովորաբար անում է մանաւանդ շըրջաններում: Նա սիրում է մանաւանդ դամբանական կարդալ... Սրանից երկու-երեք տարի առաջ նա ինքը „մենակ„ (խե՜ղճ, բացի իրանից իր „գործունէութիւնն„ ուրիշ գնահատող չունէր) տօնեց իր երեսուն թէ քառասուն ամեայ „գործունէութեան յօբելեանը„ և յայտարարեց իր պէսպիսագոյն թերթում, թէ տասն և երեք տարեկան հասակից արդէն „ազգային գործիչ„ է եղել և իր առաջին „գործը“ սկսել է դամբանականով ինչ-որ մեռելի գլխին: Չերազը փափագ ունի „Հնչակի„ գլխին էլ դամբանական կարդալու, երևի այս անգամ իր „գործունէութիւնն„ ուզում է աւարտել..:

*
* *

Նա նոյնպէս սիրում է մեծ անուան տէր մարդկանց գլխարկի տակ մտնել, որ ինքն էլ մեծ երևայ... գէթ տխմարների աչքին: Նա ինքն իրան մեծ կարևորութիւն է տալիս, որովհետև ուրիշներն իրան կարևորութիւն չեն տալիս: Նա սիրում է մեծ տիտղոսներ. այսպէս կ. Պոլսի հոսոսական դպրոցների պարզ վարժապետն իրան պրոֆէսոր է շինել տվել հայերէն լեզուի Անգլիայում (բայց աշակերտներ չունի, դժբաղդաբար): Յետոյ. ահա եօթ տարի է, ինչ նա իրան ներկայացնում է թէ՝ հայերին և թէ եւրոպական հասարակութեան իբրև „Բերլինի վեհաժողովի նախկին հայ պատգամաւոր„, մի կեղծիք՝ որ միշտ գրած ունի իր թերթի ճակատին: Բայց, բարեբաղդաբար, եւրոպական հասարակութիւնն այդ հրէշաւոր սուտը կուլ տալու միջոց չունի, և դա այն դժբաղդ պատճառով, որ կեղծ պատգամաւորի թերթը մէկ ու կէս եւրոպացի ընթերցող ունի միայն, ինչ, անշուշտ, մեծ հարուած պէտք է նկատել հայկական դատի համար: Այդ նշանաւոր մարդը, որ Բերլին էր գնացել միայն իբրև թարգման հայ պատգամաւորների, կ. Պոլսում, պատրիարքարանի հոտած բակում ու մութ նախասենեակներում սքանչելի վարպետ է դարձել—իր պրոֆէսորներին մինչև իսկ գերազանցել է—մէկ արհեստում, որ այսօր իր գլխաւոր զէնքն է իր „ազգային գործունէութեան„ մէջ: Որոշ նպատակներով (որ առհասարակ թաքուն է պահում, բայց երևի ազգասիրական լինելու են) նա հագնում է հրեշտակի դիմակ և խաբեբայական լուրեր ու առասպելներ է տարածում: Դըրամական նախանձն իր մէջ խիստ զարգացած լինելով, նա զառանցում է թէ իբր Զէյթունից նամակ է ստացել՝ թէ իբր „Հնչակի„ գումարած դրամներից Զէյթունի համար ոչինչ չէ ղրկվել: Ի հարկէ ինքը քաջ գիտէ, որ այդ բոլորն ազաղակիչ սուտ է, որ այդ սուտն էլ նա ասում է նախանձից դրդված, որովհետև կուզենար, որ այդ դրամը ստացած լինէր այն անուանական կենտրոնը, որի մասին „Հայք„ նըրան ծաղրում է, և որն՝ այն մեծ առաւելութիւնն ունի ամեն ուրիշ կենտրոններից, որ գրտնվում է նոյն իրան սուտ պատգամաւորի անմիջական տրամադրութեան տակ: Ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանել մեր կեղծ պատգամաւորը շատ է սիրում: Սակայն կարող եմ հաւատացնել ամեն երևակայելի և աներևակայելի ջէզուիտներին, լինի դրանց մէջ մինչև իսկ կեղծ պատգամաւորը, հաւատացնել նոյնպէս մտքով սնանկ ու համբակ թերթերի ողորմելի խմբագրիչներին, թէև դրանց մէջ խմբագրապետը լինի նոյն ինքն Չերազը, որ ամենայետին ռուս նիհիլիստը, որոնց այնքան ատում է մեր օրինակելի կեղծ պատգամաւորը, միշտ զզուանքով հալածում ու դատափետում է ամեն խաբեբայութիւն և ամեն խաբեբաներին:

*
* *

Կեղծ պատգամաւորը ոչ միայն կեղծ պատգամաւոր լինելով է նշանաւոր, այլ նա իր խելքն էլ վաճառքի է հանել և այդ անելով հանդերձ՝ մի յատկութիւն է ցոյց տվել, որից ամեն խաղաղասէր մարդ պէտք է զգուշանայ: Նա իրան մեծ դիւանագէտ է ծախում և աջ ու ձախ՝ սկսած Սօլզբերից ու Գլադստօնից և ռուսաց տէրութիւնից մինչև վերջին միամիտ հայի գլխին իր օլիմպիական երևակայական բարձրութիւնից պատգամներ է կարդում իբրև իր խելքի արտադրութիւն՝ հայոց դատի նկատմամբ: Միւս կողմից էլ՝ որին որ սկսել է տալ բարեկամական այդպիսի խրատներ, վերջը դարձել նրան թշնամի: Այսպէս սուլթանին ժամանակով խելքի խրատներ տվեց, նա չը լսեց և Չերազը թշնամացաւ նրան: Գլադստօնին դիւանագիտական խրատներ կարդաց, նա չը ըսեց և հայ մեծ դիւանագէտը թշնամացաւ նրան. Սօլզբերիին — նոյնպէս, Գոլուխովսկիին — նոյնպէս, „Հնչակին„—նոյնպէս. իր թերթի նախորդ թուում շողոքորթում էր „Դրօշակին„, իսկ վերջին թուում յարձակվում է նրա վրայ. երէկ շահագործելու համար հայ մեծամեծների անունների ետևից ընկած որս էր անում, իսկ այսօր երբ դրա մէջ անաջողութիւն ունեցաւ, ասում է թէ նրանք պէտք չեն, սուլթանը կամ Շահը կը բարկանայ: Տասն և ութ տարի առաջ ինքը ոչ միայն խօսքով, այլ և ընթացքով դէմ էր ռուսաց տէրութեան, այսօր „Հնչակի“ ու „Դրօշակի“ վրայ է յարձակվում, որովհետև սրանք յայտնում են՝ թէ ռուսաց քաղաքականութիւնը հայոց դատին հակառակ է: Այդ “perfectioné„ եղած (կատարելագործված) կեղծ դիւանագէտը դէմ էր ռուսաց տէրութեան այն ժամանակ, երբ դրա քաղաքականութիւնն աւելի նպաստաւոր էր մեզ քան անգլիականը, մինչդեռ այսօր ճիշդ դրա հակառակն է... Այսպէս կեղծ պատգամաւորի և կեղծ դիւանագէտի հետ բարեկամանալը վտանգաւոր է, որովհետև իր խելքն է ուզում քեզ ծախել, և երբ նրա մէջ գնելու բան չես գտնում, թշնամանում է քեզ: Ինքն էլ բաց օդում, քամուշնչի առջև դրված միշտ պտտվող հողմացոյց է, որ աշխարհի չորս կողմերը ցոյց տալու չափ յատկութիւն չունի...

*
* *

Եւ ճամբան կորցրած այդ կեղծ պատգամաւորը լաւ չէ՞ր անիլ արդեօք, եթէ անմեղ կերպով մեր փոքրիկ Դուրեանի ոտանաւորները թարգմանէր և անվնաս զառանցանքի մէջ ընկներ, թէ Դուրեանն Ամերիկայի գրական մեծ հսկայ Լոնգֆելլօ բանաստեղծից բարձր է և թէ ինքն էլ պատգամաւորի տիտղոս գողացող չէ, այլ Գլադստօնից էլ մեծ դիւանագէտ է: Եւ մեր համեստ խելքի խրատն է ձեզ, պ. Չերազ, որ այդ արհեստով շարունակէք պարապվել. ախար ձեր ի՞նչ գործն է ագռաւի թեւերով արծուի թռչել առնելու փորձ անել, գիտէ՞ք որ անկումը սոսկալի կը լինի ձեզ համար: Դէս ու դէնից, աշխարհից անտեղեակ մի քանի միամիտ հայերից բաւական մեծ նպաստներ էք ստանում, գոհացէք դրանով և ձեր վերմակի տակ ժողվեցէք ձեր ոտները, որպէս զի ձեր տան աղբը դուրս չը գայ... Գոհացէք ձեր չափովը... Շատ, շատ — կարող էք նաև մերթ ընդ մերթ ձեր մի սովորութիւնը գործածել և զանազան թագակիրների ոտները լզել... Բայց այդ արդէն ձեր չափից դուրս է...

Ա.

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.